ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. հունիսի 13-ից 15-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Սանկտ Պետերբուրգ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Արմեն Սիմոնյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Ռուսաստանի Դաշնություն, ք. Սանկտ Պետերբուրգ, 2022թ. հունիսի 13-ից 15-ը:

4. **Հրավիրող կողմը՝**

   Եվրասիական զարգացման բանկ:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

   Քննարկել ԵԱՏՄ անդամ երկրների հետ Հայաստանում կայուն զարգացման նպատակների համար մասնավոր ներդրումների ներգրավման, այդ թվում՝ պետություն-մասնավոր գործընկերություն նախագծերի միջոցով կայուն ենթակառուցվածքների ստեղծման հեռանկարները և խնդիրները:

6. **Քննարկված թեմաները՝**

   Քննարկվել է ՀՀ-ում, հատկապես տրանսպորտի ոլորտում պետություն-մասնավոր գործընկերության նախագծերի իրականացման և ֆինանսավորման համար Եվրասիական զարգացման բանկի հնարավորությունների օգտագործումը, ինչպես նաև Հայաստանի՝ որպես տարանցիկ երկրի հնարավորությունները, որը հնարավորություն կտա նոր լոգիստիկ ուղիներ ձևավորել:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Կլոր սեղան-քննարկման շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել ԵԱՏՄ պետություններում կայուն զարգացման ապահովման համար պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերին: Ներկայացվել է ելույթ՝ ՀՀ-ում պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերը տրանսպորտի ոլորտում:

Երկկողմանի հանդիպում է տեղի ունեցել Եվրասիական զարգացման բանկի խորհրդի ղեկավարի տեղակալ Դենիս Իլյինի հետ: Քննարկվել է Երևանի Մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման և գործող գծի վերակառուցման ֆինանսավորման հարցը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ժամանակ որոշումներ չեն ընդունվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման ընթացքում կողմերը առաջարկներով հանդես չեն եկել:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

20.06.2022